

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարություն

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»  
պետական ոչ առևտրային կազմակերպություն  
(ՆՁԱԿ ՊՈԱԿ)

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության

«Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն»

պետական ոչ առևտրային կազմակերպություն

(ՆՁԱԿ ՊՈԱԿ)

**ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԵՐԵՎԱՆ 2014

Գիտական ղեկավար՝	Լևոն Ղարիբյան
Հեղինակ՝	Լևոն Ղարիբյան
Խմբագիր-սրբագրիչ՝	Լիլիա Ալյան

Վերլուծական ակնարկում կարևորված է նորարարության որոշիչ դերը՝ որպես սնունդային զարգացման ուղղորդիչ գործոն: Ներկայացված են հինգերորդ տեխնոլոգիական կացութաձևի առանձնահատկությունները և մասնագիտական շրջանակներում ընդունված ազգային ինովացիոն համակարգի (ԱԻՀ) չորս տարատեսակները: Շեշտադրված են Հայաստանում մեկնարկած ԱԻՀ ձևավորման նախադրյալները, նախապայմաններն ու առկա խնդիրները՝ ըստ ԱԻՀ բազիսային չորս ենթակառուցվածքների և Հայաստանում մեկնարկած ԱԻՀ ձևավորման գործընթացում առկա խնդիրների լուծման մի շարք առաջարկություններ՝ ըստ ԱԻՀ բազիսային չորս ենթակառուցվածքների:

*В обзоре большое значение придается определяющей роли инноваций в качестве направляющего фактора экономического развития. Представлены особенности пятого технологического уклада и четыре типа национальных инновационных систем (НИС). Подчеркнуты стартовавшие в Армении предпосылки для формирования НИС, условия и существующие задачи согласно четырем основным инфраструктурам НИС и ряд рекомендаций по решению задач формирования этих систем.*

*The essay is about the structural and functional features of the innovative systems, defining the important role of innovation as a guiding factor in economic development. Presents the fifth technological lifestyle features and four types of the national innovative system (NIS). Emphasized the preconditions for the formation of NIS, conditions, existing problems and series of recommendations for solving the problems of formation of this system in Armenia.*

## Իրավիճակի ընդհանուր նկարագիրը

Ներկա դարաշրջանում գրեթե բոլոր երկրներում *ազգային ինովացիոն համակարգի* /ԱԻՀ/ ձևավորման անհրաժեշտությունը պայմանավորված է տնտեսության իրական հատվածի և ենթակառուցվածքների զարգացման գործընթացում *նորարարությունների* տնտեսական արդյունավետության դերակատարման բարձրացմամբ: Այն առաջին հերթին ակնառու է հասարակության տարբեր շերտերի վրա գիտության և տեխնոլոգիաների բեկումնային ազդեցությամբ և արմատական տեղաշարժերով, որոնք էլ իրենց հերթին հանգեցնում են խոշորամասշտաբ սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ փոփոխությունների:

Որպես պատճառահետևանքային ազդակներ փոփոխվում են նաև տնտեսական աճը պայմանավորող հիմնական գործոնները: Առավել կարևոր դերակատարում են ստանում գիտելիքը և մտավոր կապիտալը, որոնք արդեն իսկ դարձել են մրցունակության առավելությունների ձևավորման և սոցիալ-տնտեսական համակարգերի կայունացման գլխավոր նախապայման:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամն ու քաղաքական իրադարձություններն էական ազդեցություն ունեցան Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի վրա: Պարզ դարձավ, որ Հայաստանին անհրաժեշտ է ազգային տնտեսական ինովացիոն ռազմավարություն և տնտեսության զարգացման նոր մոդել, որը կկարողանա դիմակայել տարաբնույթ ճնշումներին:

Երկրի համար դա ժամանակի մարտահրավեր է, մեր առջև կանգնած է խնդիր՝ ընդունել և իրականացնել համակարգային ճգնաժամից ելք փնտրելու և հետագա զարգացման իրական ռազմավարություն: Այդ առումով, ՀՀ-ում տնտեսության արդիականացման և ինովացիոն վերակառուցման հարցերն ընդունվել և մնում են որպես սոցիալ-տնտեսական վերափոխումների առաջնային խնդիրներ:

Կարևորելով նորամուծության և ձեռներեցության դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և տնտեսական կայունության ապահովման գործում, ՀՀ կառավարությունը նշված ուղղությունները համարում է երկրի տնտեսության զարգացման գերակա խնդիրներից մեկը և շարունակական քայլեր ձեռնարկում ոլորտի պետական աջակցության և զարգացման ուղղությամբ:

Այսօր գիտելիքի հիմնական չափորոշիչը գիտելիքն օգտագործած մարդկանց թիվն է, իսկ գիտելիքի օգտագործման հիմնական չափորոշիչը՝ *օգտագործված գիտելիքի հիման վրա ձևավորված նոր գիտելիքը*: Գիտելիքահենք տնտեսության հիմնական գաղափարը՝ գիտելիքի շնորհիվ գեներացված տնտեսական շահույթն է, որը պետք է շոշափելի գերազանցի ներդրումների այն ծավալը, որն անհրաժեշտ է նրա ստեղծման համար:

Հայաստանի համար ներկա փուլի ռազմավարական գերխնդիրն է գիտելիքահենք տնտեսության կառուցումը՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի համար առկա լուրջ նախադրյալների իրացման վրա: Շեշտադրումը կատարվում է մարդկային մտքի զարգացման, կարողությունների բացահայտման և ավելացման, գիտատեխնիկական արագաքայլ առաջընթացի վրա:


Հարևան երկրների համեմատ հայ ժողովուրդն ունի ստեղծագործական-նորարարական ներուժի մի շարք առավելություններ: Նորարարությունը առաջընթաց է գիտության, նոր տեխնոլոգիաների և մարդկանց բարեկեցության համար: Հայաստանը կանգնած է ազգային նորարարական համակարգի բարելավման խնդրի առջև: Այն պետք է ամրապնդի ներդրումային ու ինստիտուցիոնալ կարողությունները, մշակի նորարարության աջակցման հստակ քաղաքականություն և ռազմավարություն, բարելավի գործող կառույցների միջև եղած համագործակցությունն ու փոխհարաբերությունները, առևտրայնացման հնարավորությունները:

Նորարարությունը պահանջում է միասնական և համընդհանուր հենք ու փոխհամագործակցություն, բայց ոչ՝ առանձնացում: Նորարարության զարգացման ուղին պայմանավորված է տեղեկատվահաղորդակցման տեխնոլոգիաներով, կրթական համակարգով, աշխատուժի և ֆինանսական շուկաների, մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության համակարգի, ապրանքային շուկայում առկա մրցակցության և բարեկեցության մակարդակով:

## Միջազգային փորձը

Ուսումնասիրելով մի շարք երկրների *ազգային ինովացիոն համակարգերի* /ԱԻՀ/ ձևավորման փորձն ու առանձնահատկությունները, պետք է նշել, որ չնայած տարբեր երկրների ԱԻՀ-ներ իրենց կառուցվածքի տարրական մակարդակներում բավականին տարբեր են, սակայն դրանցում առկա են բովանդակային ու գործառնության (ֆունկցիոնալ) հատկանիշների և հիմնական կառուցվածքների մի շարք ընդհանրություններ: Որպես կանոն, ԱԻՀ-ների բազային կառուցվածքը պարունակում է չորս հենասյուն՝ *պետական, կրթական, գիտական և գործարար*, այսինքն՝ իրար միջև որոշակի օրինաչափություններով փոխկապակցված պետական քաղաքականություն իրականացնող, ինովացիոն կադրեր պատրաստող, գիտելիք գեներացնող և ինովացիոն արտադրանք տվող ենթակառուցվածքներ:

**Ազգային ինովացիոն համակարգի պարզեցված մոդելը**




Հինգերորդ տեխնոլոգիական կացութաձևի առաջնային փուլում առաջին պլան են մղվում հիմնարար հետազոտությունները և որոշակի ժամանակ լոկոմոտիվի դերում է հայտնվում **պետությունը**: Կասկած չկա, որ առանց պետության առաջատար դերի, հետպատերազմյան շրջանում չէին հայտնվի ո՛չ առաջին ԷՀՄ-ները, ո՛չ ատոմային էներգետիկան, ո՛չ տիեզերական նվաճումները և հինգերորդ տեխնոլոգիական կացութաձևի այլ բաղադրիչներ:

Այնուհետև, **խոշոր բիզնեսը** իր վրա վերցնելով լոկոմոտիվի դերը՝ հենվելով գիտատեխնիկական հեղաշրջման բազիսային մշակումների վրա, որոշակի հետք է թողնում հինգերորդ տեխնոլոգիական կացութաձևի կայացման գործում: Միայն մեծ անդրազգային կորպորացիաներն են ի վիճակի իրականացնելու նախագծեր, որոնք ուղղված են խոշորամասշտաբ գիտական և տեխնիկական զարգացման նոր ուղղությունների մշակմանն ու առևտրային յուրացմանը:

Սակայն որոշակի էտապում, պահպանելով իրենց տնտեսական հզորությունը, խոշոր կորպորացիաները հինգերորդ տեխնոլոգիական կացութաձևի վերջնական փուլում իրենց տեղը զիջում են **փոքր և միջին** բիզնեսին: Այս ընթացքում է մեկնարկում ատթորսսինգային գործառույթների ձևավորումը և համապատասխան ընկերությունների ստեղծումը:

**Ինովացիոն զարգացման մոդելները**: Աշխարհում գոյություն ունեցող ԱԻՀ-ների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել չորս տեսակ: Դրանցից առաջինը պայմանական անվանում են «եվրատլանտյան» մոդել, երկրորդը՝ «արևելասիական», երրորդը՝ «այլընտրանքային», չորրորդը՝ «եռակի պարույրի» մոդել:

**Ինովացիոն գործընթացի կյանքի տևողության ցիկլում  
ձևավորվող մտավոր սեփականության տարատեսակները**



**Եվրաստանյան մոդելը** ամբողջական ինովացիոն ցիկլի մոդելն է՝ սկսած ինովացիոն գաղափարից մինչև պատրաստի արտադրանքի զանգվածային արտադրություն: Այդ մոդելը կիրառող երկրներում, որպես կանոն, ներկայացված են ինովացիոն համակարգի կառուցվածքի բոլոր բաղադրիչները՝ հիմնարար և կիրառական գիտությունը, հետազոտական մշակումները, փորձնական նմուշների ստեղծումը և դրանց զանգվածային արտադրության մեկնարկումը: Այդ մոդելը օգտագործում են այն զարգացած երկրները, որոնք զլխավորում են ազգային տնտեսությունների համաշխարհային մրցունակության վարկանիշը (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա և այլն):

**Արևելասիական մոդելը** ինովացիոն զարգացման այն մոդելն է, որի ինովացիոն ցիկլում բացակայում է հիմնարար գաղափարի փուլը: Այդ մոդելի վրա հենված ինովացիոն համակարգերը գործնականում գրեթե ամբողջովին զրկված են հիմնարար գիտության բաղադրիչից (երբեմն էլ՝ կիրառական): Տվյալ մոդելը օգտագործվում է արևելասիական տարածաշրջանի երկրներում (Ճապոնիա, Հարավային Կորեա, Հոնկոնգ, Թայվան): Լինելով բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ուղղվածության, Արևելյան Ասիայի պետությունները որպես կանոն փոխառում են գաղափարը այն երկրներից, որոնք հետևում են

«ավանդական» մոդելին: Այդ մոդելի դասական օրինակ է համարվում Ճապոնիայի ինովացիոն համակարգը:

**Այլընտրանքային մոդելը** կիրառվում է առավելապես ագրարային երկրներում, որոնք չունեն հիմնարար և կիրառական գիտության ոլորտում զգալի ներուժ և հարուստ հումքային պաշարներ, վերամշակման տեխնոլոգիաներ, որոնց վաճառքը կարող էր դառնալ ազգային մրցունակության հենք: Դրա հետևանքով նման ինովացիոն համակարգերում թույլ է ներկայացված կամ ընդհանրապես բացակայում է ոչ միայն հիմնարար և կիրառական գիտության բլոկը, այլև բարձր տեխնոլոգիական բաղադրիչը որպես այդպիսին: Այդ մոդելին են համապատասխանում Թայլանդի, Չիլիի, Թուրքիայի, Պորտուգալիայի և այլ ազգային ինովացիոն համակարգերը:

Վերջապես, **«եռակի պարույրի» մոդելը**, որը գործնական կիրառություն ստանալով Միացյալ Նահանգներում, ունի սկզբունքային տարբերություն վերը նշվածների համեմատ ոչ միայն ԱԻՀ-ի կառուցվածքով, այլև դրա առանձին ենթակառուցվածքների փոխգործակցության մեխանիզմով: Այս մոդելում ԱՀԻ-ն բաղկացած է իրար հետ շաղկապված երեք բաղադրիչներից՝ բիզնեսից, պետությունից և համալսարաններից: Այստեղ յուրաքանչյուր բաղադրիչ իրեն բնորոշ գործառնություններին զուգահեռ, մասնակից է լինում նաև մյուս երկու բաղադրիչների գործառնություններին: Եռակի պարույրի մոդելը ԱԻՀ ձևավորման նորագույն մոդել է, որը զարգացում է ստացել եվրատլանտյան մոդելի հենքի վրա: Իր վերջնական տեսքով, այն գոյություն չունի որևէ երկրում: Բացի Միացյալ Նահանգներից, դրա որոշ տարրեր կիրառվում են Արևմտյան Եվրոպայի այլ զարգացած երկրներում, Բրազիլիայում և Ճապոնիայում: Եռակի պարույրի սկզբունքով նորարարական զարգացման դասական օրինակ է Միացյալ Նահանգներում Միլիկոնային հովտի ստեղծումը:

## **Առկա խնդիրները**

Տնտեսության ինովացիոն զարգացումը Հայաստանում մեկնարկել է **ազգային ինովացիոն համակարգի** ձևավորմամբ: Այս փուլի հիմնական նպատակը ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հիմքերի ստեղծումն է: Բացի այդ, ինովացիոն ռազմավարությունը պետք է ուղղվի այնպիսի արտադրությունների կազմակերպման խթանմանը, որոնք կարող են կիրառել նորամուծություններ և արտադրել միջազգային չափանիշներով գիտատար արտադրանք՝ դուրս գալով արտաքին շուկա: Ցավոք, Հայաստանում ազգային ինովացիոն համակարգը նախկինի նման առաջնորդվում է հիմնականում ելնելով առաջարկի, քան պահանջարկի անհրաժեշտությունից:



Հայաստանյան ինովացիոն համակարգի ստեղծումը դեռ նոր է սկսվում: Ամենակարևոր խնդիրն է՝ ազգային ինովացիոն համակարգի մասնակիցների գործունեության անմիջական կարգավորման գործում որոշել պետության մասնակցության ներգրավվածության չափն ու աստիճանը: Մի կողմից, պետությունը պետք է որոշում կայացնի ստեղծել տնտեսական միջավայր՝ համապատասխան օրենսդրական ակտեր ընդունելու միջոցով, մյուս կողմից՝ գործի որպես արտադրատնտեսական կառուցվածքների համալիրի սեփականատեր և ներդրումներ կատարի դրանց զարգացման համար:

Մտավոր կարողությունները, գիտական ներուժը, կրթության հանդեպ հակվածությունը Հայաստանի համար այն կարևորագույն ռեսուրսներն են, որոնք առաջընթացի ամենաառանցքային գործոններն են: Այդ ռեսուրսների կշռադատված և լիարժեք կիրառումը՝ զուգորդված դրանց շարունակական ընդլայնմամբ և որակական կատարելագործմամբ, դուրս կբերի տնտեսությունը գիտելիքահենք զարգացման ուղի: Այս նպատակի իրականացումը պահանջում է պետության, հասարակության և անհատի ջանքերի կենտրոնացում և համախմբված ուղղորդում:

Ստորև, ըստ ԱԻՀ հիմնական հենասյուների դասակարգման, առանձնացված են խնդիրներ, որոնք շուտափույթ լուծման կարիք ունեն.

### ***1. Պետական քաղաքականությունն իրականացնող ենթակառուցվածքներ***

- Բացակայում է տնտեսության այս կամ այն ոլորտի զարգացմանն ուղղված հետազոտությունների պետական պատվերը, բավարար ուշադրություն չի դարձվում գիտական արդյունքի ապրանքայնացման և այլ երկրներում դրանց իրացման խնդիրներին:
- Չհստակեցված գիտական և գիտատեխնիկական քաղաքականության պայմաններում, դժվարությամբ են ընթանում գիտության ոլորտի բարեփոխումները, դանդաղ է ձևավորվում կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիաների ներդաշնակ փոխկապակցված համակարգը:
- Անկախության տարիներին, հայտնի պատճառներով, չի իրականացվել գիտության և արտադրության փոխկապակցված զարգացմանը նոր թափ հաղորդող որևէ նշանակալից ծրագիր, որը էապես կնպաստեր գիտության, տեխնիկայի և տնտեսության զարգացմանը, միջազգային գիտակրթական և գիտատեխնիկական տարածքում հանրապետության համար կապահովեր առաջատար դիրք:
- Չեն հստակեցվել միջազգային համագործակցության պետական առաջնայնությունները, այն հիմնականում իրականացվում է կազմակերպությունների կամ առանձին գիտնականների նախաձեռնությամբ և կրում է տարրերային ու խիստ անձնավորված բնույթ: Քիչ են

համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող միջազգային գործընկերային ծրագրերը, որոնք կարող են հանգեցնել առևտրայնացման ենթակա արդյունքների:

- Հայաստանում բացակայում են հարկային արտոնությունները, որոնք կխթանեն մասնավոր ներդրումները գիտահետազոտական և փորձարարականատրուկտորական (ԳՀՓԿ) աշխատանքներում: Ընկերությունների «Ստարտ-ափ» ծրագրերի խթանման տարատեսակ գործիքների կիրառումը որպես կանոն քիչ արդյունավետ է:
- ԳՀՓԿ աշխատանքներին հատկացվող պետական միջոցները ծախսվում են ոչ բավարար արդյունավետությամբ:
- Ինովացիաների ճանաչումը որպես պետական քաղաքականության կարևոր գործիք, առայժմ ոչ բավարար է արտացոլվում բյուջետային ծախսերի կառուցվածքում:
- Ի տարբերություն զարգացած ինովացիոն համակարգ ունեցող երկրների, Հայաստանում պետություն-մասնավոր հատված փոխգործակցությունը ինովացիոն նախագծերի իրականացման ասպարեզում թույլ է զարգացած:
- Առանձին հիմնախնդիր է պետական վիճակագրական համակարգի անհամապատասխանությունը ինովացիոն զարգացման կառավարման նպատակներին:

## ***2. Ինովացիոն կադրեր պատրաստող ենթակառուցվածքներ***

- Ձեռներեցության համար անհրաժեշտ գործարար տեղեկատվության, խորհրդատվության տրամադրման ու կադրերի մասնագիտական ուսուցման հարցերում ծառայությունների մատուցման մակարդակը, ինչպես նաև սկսնակ գործարարների համար՝ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու հետ կապված անհրաժեշտ հմտությունների ձևավորման օժանդակումը կրում է ձևական բնույթ և չի բավարարում ժամանակակից պահանջներին:
- Բարդ է իրավիճակը հայկական գիտության մեջ սերունդների ճեղքվածքը հաղթահարելու հարցում: Դեռևս չի լուծվում գիտական կադրերի ծերացման և «ուղեղների արտահոսքի» պրոբլեմը:
- Ինովացիոն ձեռներեցության համար կարևոր անձնական հատկանիշները՝ շարժունությունը, ողջ կյանքի ընթացքում ուսանելու ցանկությունը, հակումը դեպի ձեռներեցությունը և ռիսկային իրավիճակներում կողմնորոշվելու ունակությունը ընդհանուր առմամբ ոչ բավարար են զարգացած:
- Ինովացիոն ոլորտում թերևս ձևավորված չէ բիզնես-համաժողովներին, ցուցահանդեսներին, համատեղ ներդրումային ու զբաղվածություն ասպահովող ծրագրերին, կլոր սեղաններին, մասնագիտական քննարկումներին, թրենինգներին մասնակից լինելու մշակույթը,

տեղեկատվական աջակցությունը, որը կարող է ընձեռել բացառիկ հնարավորություններ գիտատեխնիկական ստեղծագործական ներուժի և նախաձեռնությունների առավելագույն դրսևորման համար, ինչպես նաև աջակցել կառավարության կողմից ամրագրված ինովացիոն քաղաքականության իրականացմանը:

### **3. *Գիտելիք գեներացնող ենթակառուցվածքներ***

- Ազգային գիտական արժեքավոր արդյունքներն ու նվաճումները չեն վերածվում շրջանառու կապիտալի, չեն առաջացնում գործնական հետաքրքրություն ազգային ներդրողների մոտ և գյուտարարները չեն ստանում զգալի եկամուտ:
- Հայաստանյան պետական հետազոտական կազմակերպությունների մեծ մասը նախկինի նման գործում է «տեխնոլոգիաներից ետ մղվելու» սկզբունքով, չզինվելով այն գաղափարով, որն անհրաժեշտ է ամբողջապես կենտրոնացնել արտադրական սեկտորի և հասարակության կարիքների վրա:
- Ձևավորված չէ գիտության շուկա, արտացոլում է պետական ֆոնդերի անարդյունավետ ծախսում և իրական սպառնալիք է ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը:
- Հապաղում է տնտեսության ճյուղերում տեխնոլոգիաների գույքագրման գործընթացը, առկա իրավիճակի վերլուծության և գնահատման ուղղությամբ տարվող աշխատանքները կրում են հատվածային բնույթ, անհրաժեշտություն է դառնում տնտեսության մեջ ներկայումս եղած տեխնոլոգիական «ձեղքվածքի» բուն պատճառների բացահայտումը և տեխնոլոգիաների արդիականացման ուղղությամբ պետության կողմից իրականացվելիք քայլերի կանխատեսումը:
- Պահպանվում է նաև հայ գիտնականների մտավոր արդյունքի ցիտման բավականին ցածր մակարդակը:

### **4. *Ինովացիոն արտադրանք տվող ենթակառուցվածքներ***

- Հայաստանում պետական հետազոտական կազմակերպությունները շարունակում են աշխատել առավելապես «տեխնոլոգիական խթանների» ռեժիմով, քան դեկավարվում են շուկայի տեխնոլոգիական պահանջմունքներով: Արդյունքում հաճախ ստեղծվում են շուկայի կողմից չպահանջարկված տեխնոլոգիաներ, որոնք, բնականաբար շեղում են ռեսուրսներն ու ջանքերը:
- Հրատապ են մնում տեղական արտադրողների շահերի պաշտպանության, ապրանքների մրցունակության բարձրացման և միջազգային շուկայում ինտեգրման նախապայմանների ստեղծման խնդիրները:

- Չափից ավելի բարձր վարկային տոկոսադրույքը բերում է ձեռնարկատիրական գործունեության վերակողմնորոշմանը դեպի արագ փոխհատուցվող նախագծեր (առևտուր) և լուրջ վնասներ պատճառում գիտատար ոլորտների զարգացմանը, որոնք պահանջում են մեծ ներդրումներ, հաճախ դուրս մղելով գիտատար համալիրի ոլորտները երկրի սահմաններից դուրս: Փոքր բիզնեսը, որի համար առաջարկվող դրույքները առավելապես ուժից վեր են, պարզապես ետ են կանգնում նախաձեռնություններից:

### **5. Ընդհանուր համակարգային խնդիրներ**

- Դանդաղ տեմպերով է ընթանում գիտատեխնիկական և նորարարական ներուժի գնահատման, ինովացիոն համակարգի ձևավորմանն ու զարգացմանը նպաստող միասնական համակարգի ձևավորման գործընթացը:
- Ակնհայտ է գիտական արդյունքի առևտրայնացման անկախ փորձագիտական համակարգի ստեղծման, մասնավորապես՝ գիտատեխնիկական գործունեության արդյունքների և դրանց փորձագիտական գնահատումն իրականացնող ճյուղային փորձագետների գրանցամատյանների վարման անհրաժեշտությունը և համապատասխան տվյալների բազաների ձևավորումը:
- Հայաստանյան ինովացիոն համակարգը դեռևս թույլ է կողմնորոշված ինչպես դեպի ներքին, այնպես էլ՝ արտաքին շուկաներ: Այն իրողության ընկալումը, որ սպառողական ապրանքների շուկաներում ինովացիաները չի կարելի դեկավարել վերևից, շատ դանդաղ է ընթանում համակարգի բոլոր մակարդակներում: Ինովացիոն գործընթացը պահանջում է կազմակերպում և կառավարում, սակայն մինևս ժամանակ այն հնարավոր չէ պլանավորել մանրամասներով: Նոր գաղափարները կարող են ծագել արժեքի ավելացման շղթայի ցանկացած օղակում, այնպես որ անհրաժեշտ է տեղ հատկացնել փորձարկումների, ուսուցման և հարմարվողականության համար:
- Ինովացիոն ոլորտում գոյություն ունի լուրջ անջրպետ պետական և մասնավոր հատվածների միջև: Հայաստանում հետազոտությունների զգալի մասը իրականացվում է պետական հատվածում, այն դեպքում, երբ ստացված գիտելիքը հիմնականում պետք է կիրառվի մասնավոր հատվածում: Այստեղից հրատապ անհրաժեշտություն՝ զարգացնել մասնավոր-պետական գործընկերությունը: Գործնականում, սակայն, օրենսդրական, վարչական և հոգեբանական կարգի պրոբլեմները հաճախ խանգարում են հաջող գործընկերության զարգացմանը: Առաջացած իրավիճակի պատճառների առավել խորը ընկալումը խիստ անհրաժեշտ է նրա բարելավման համար:

- Հայաստանը զգալի առաջընթաց է արձանագրել իր օրենսդրությունը միջազգային նորմերին համապատասխանեցնելու հարցում: Ուժի մեջ են մտել արտոնագրային և հակամենաշնորհային օրենքներ, սահմանվել են ավելի բարձր տեխնոլոգիական և որակական չափորոշիչներ: Սակայն, դրանց արդյունավետությունը սահմանափակ է փորձի պակասի և պահպանման ապահովման հարցերում: Բացի այդ, դեռևս լուծված չէ պետության կողմից ֆինանսավորվող հետազոտությունների արդյունքներից առաջացած մտավոր սեփականության հանդեպ իրավունքի տրամադրման հարցը:
- Նորարարական վարքագծի առավել ցածր զարգացած տեսակների բացարձակ գերակայությունը, այդ թվում՝ պատրաստի տեխնոլոգիաների ներմուծումը բնութագրում է հայաստանյան ինովացիոն համակարգը որպես իմիտացիոն բնույթի կողմնորոշվածության, այլ ոչ թե արմատական նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ստեղծման ուղղվածության:
- Դեռևս ցածր մակարդակի վրա են գտնվում ինովացիոն տեխնոլոգիաների տնտեսական արդյունավետության գնահատման և դրանց առևտրայնացմանն աջակցող շուկայաբանական համակողմանի ուսումնասիրությունների կազմակերպման աշխատանքները, իրավաբանական խորհրդատվության ապահովման խնդիրները:

### **Առաջարկվող լուծումները**

Ազգային ինովացիոն համակարգը համեմատաբար նոր սոցիալ-տնտեսական ինստիտուտ է, որը շուկայական տնտեսության պայմաններում արդյունաբերականից հետարդյունաբերական հասարակության անցնելիս շարունակաբար կատարելագործվում է:

Ինչպես արդեն նշվել է, միկրոմակարդակում ԱԻՀ ենթակառուցվածքների համահունչ աշխատանքի և արդյունավետության բարձրացման կարևոր գործոն է փոքր ինովացիոն ձեռներեցության զարգացումը: Նույնիսկ միջնաժամկետ հատվածում տնտեսությունում ակնկալել առաքված ապրանքի ընդհանուր ծավալի համեմատ ինովացիոն արտադրանքի զգալի աճ, այսօր իրատեսական չէ, եթե չձեռնարկվեն համապատասխան միջոցներ դրանց ինովացիոն ակտիվության խթանման համար:

Ստորև ներկայացվում են մի շարք առաջարկություններ, որոնք կարող են նպաստավոր դեր ունենալ վերը նշված խնդիրների լուծման և հետևաբար, նորարարական ենթակառուցվածքների հետագա աշխատանքների պլանավորման գործընթացներում:

**1. Պետական քաղաքականությունն իրականացնող ենթակառուցվածքներ**

- Անկախ գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևից՝ տնտեսական ոլորտի բոլոր մակարդակներում միասնական ինովացիոն քաղաքականության մշակում և իրականացում:
- Հարկային մեխանիզմը, որն ապահովում է ինովացիոն ձեռնարկատիրական գործունեության խթանման բարենպաստ տնտեսական միջավայրը, պետք է փոխգործակցի և ներդաշնակ լինի վարկային-բանկային քաղաքականությանը և համապատասխան տոկոսադրույքներին: Միաժամանակ, տնտեսական զարգացման տրամաբանությանը համաձայն վարկային տոկոսների դրույքաչափերը ընդհանուր առմամբ պետք է ցածր լինեն տնտեսությունում միջին շահույթի մակարդակից: Այդ դեպքում ձեռնարկատերերի մոտ ցանկություն կառաջանա օգտվել փոխառու միջոցներից: Իրենց հերթին, առևտրային բանկերի վարկային դրույքաչափերը պետք է բարձր լինեն վերաֆինանսավորման և ներդրումային դրույքաչափերից, հակառակ դեպքում, պարզապես, բանկերը արդյունավետ չեն աշխատի: Այդ առումով նպատակահարմար են հետևյալ միջոցառումները.
  - հարկվող շահույթի չափերի նվազեցում այն միջոցների վրա, որոնք ուղղվում են ԳՀՓԿ աշխատանքներին և դրանց ապահովագրմանը,
  - իրավասությունների ընձեռում ինովացիոն ակտիվ ձեռնարկություններին՝ շահույթի հաշվին ձևավորելու գիտատեխնիկական զարգացման չհարկվող ֆոնդ,
  - պետական պատվերի շրջանակներում ինովացիոն արտադրանք նախագծող և թողարկող ձեռնարկությունների համար շահութահարկի մասով՝ զեղչերի համակարգի ներդնում,
  - հարկման պարզեցված համակարգ կիրառող ձեռնարկությունների ինովացիոն գործունեության հետ կապված ծախսերի ցանկի ընդլայնում, գույքի, այդ թվում՝ լիզինգով ձեռք բերված միջոցների, հողի հարկի վճարումների նպաստավոր պայմանների տրամադրում,
  - փոքր ձեռնարկությունների մասնակցությամբ ինովացիոն կլաստերներ ձևավորող մեծ ընկերություններին, վերջիններիս վարկավորող առևտրային բանկերին և փոքր ինովացիոն ձեռնարկությունների ապահովագրությունն իրականացնող ապահովագրական ընկերություններին՝ հարկային զեղչերի տրամադրում:
  - արտոնագրային-լիցենզավորման գործարքների արժեքի ԱԱՀ-ից ազատում, միասնական սոցիալական հարկի տոկոսադրույքի նվազեցում և այլն:
- Ներդնել ինովացիոն ձեռնարկությունների պարտադիր հավատարմագրման մեխանիզմ՝ ՀՀ լիազոր մարմինների կողմից դրանց նույնականացման նպատակով: Դրա հիման վրա մշակել

ձեռնարկություններին հատուկ գրանցամատյան, որում ընդգրկված ձեռնարկությունները իրավունք կունենան հայցել արտոնություններ և հատուկ պետական աջակցություն:

- Նախարարություններում և գերատեսչություններում ձևավորել գիտության և նորարարության հարցերով պատասխանատու ստորաբաժանումներ, որոնք իրենց ոլորտներում կիրականացնեն ինովացիոն ակտիվություն ունեցող սուբյեկտների գույքագրման գործընթաց:
- Միջազգային շուկաներում ցուցաբերել գործուն դիվանագիտական աջակցություն հայաստանյան մշակողներին և բարձր տեխնոլոգիական ընկերություններին:
- Իրականացնել ՀՀ և օտարերկրյա պետությունների հայ գործարարների փոխանակման ծրագրեր, կիրառելով ԱԳՆ համապատասխան դիվանագիտական խողովակները և Սփյուռքի նախարարության հնարավորությունները:
- Ստեղծել ՀՀ և օտարերկրյա պետությունների հայ ձեռներեցների գործարար-տեղեկատվական միասնական, համալրվող էլեկտրոնային տվյալների բազա:
- Պարբերաբար պատրաստել տեղեկատվական-վերլուծական նյութեր և ամփոփումներ՝ ըստ տնտեսության ոլորտների և տարածաշրջանների:
- Օպտիմալացնել մտավոր սեփականության իրավունքի փոխանցման գործընթացը և ստեղծել իրական մեխանիզմներ գիտաշխատողներին շահագրգռելու համար:
- Իրականացնել բարեփոխումներ ՀՀ պետական վիճակագրական համակարգում, հաշվի առնելով միջազգային փորձը:

## ***2. Ինովացիոն կադրեր պատրաստող ենթակառուցվածքներ***

- Ազգային ինովացիոն համակարգի տարբեր ենթակառուցվածքների հետ համատեղ կազմակերպել գիտաժողովներ, սեմինարներ և համատեղ գործարար այլ քննարկումներ:
- Տեղայնացնել Եվրամիության «Լիսաբոնյան ռազմավարությունը»:
- Համապատասխան անցում կատարել հետազոտական համալսարաններից դեպի ձեռներեցական համալսարանների՝ ապահովելով դրանց մասնակցությունը ինովացիաների առևտրայնացմանը: Նման համալսարաններում ստեղծել տեխնոլոգիական հաղորդակցման կենտրոններ, վերջիններիս բազայի վրա ձևավորել ինովացիոն ցանցեր:
- Բուհերում և ԳՀԻ-ներում ստեղծել տեխնոլոգիաների փոխանցման կենտրոններ:
- Բուհերի գիտահետազոտական աշխատանքների գնահատման համակարգում որոշիչ գործոններից մեկը համարել գիտական արդյունքի ձևավորման գործընթացում ուսանողների մասնակցության աստճանը:

- Բուհերին կից, նրանց շրջանավարտների անմիջական մասնակցությամբ ստեղծել փոքր ինովացիոն ձեռնարկություններ, հատկացնել ժամանակավոր անվճար տարածքներ, իրավունք ընձեռել նրանց օգտվելու գիտահետազոտական սարքավորումներից, մշակել փոխհատուցման համապատասխան մեխանիզմներ: Աջակցել դրամաշնորհներ ստանալու և համապատասխան հովանավորներ գտնելու գործում:
- Պետական բուհերում ձևավորել նոր մասնագիտությունների պատվերներ, կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, թրենինգներ:
- Պարբերաբար կազմակերպել երիտասարդ գործարարների ամառային դպրոցներ:

### ***3. Գիտելիք գեներացնող ենթակառուցվածքներ***

- Կազմակերպել բիզնես համաժողովներ, կլոր սեղաններ, ձևավորել տեխնոլոգիաների փոխանցման ցանցեր և տեխնոլոգիաների բորսաներ գիտական հանրության անմիջական մասնակցությամբ:
- Խթանել գիտական կազմակերպություններում գյուտերի և օգտակար մոդելների արտերկրում գրանցման գործընթացներին:
- Հատկացնել պետական առաջնային ֆինանսավորում հատկապես կիրառական գիտության այն ԳՀԻ-ներին, որոնց աշխատանքները գտնվում են փորձնական նմուշների պատրաստման փուլում: Առաջնայնություն տալ այն նախագծերին, որոնք տվյալ ոլորտի բիզնես-հանրության ներկայացուցիչներից՝ պոտենցիալ սպառողներից ունեն դրական կարծիքներ:
- Ստեղծել տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան հատուկ տվյալների բազաներ հայ գիտնականների գիտական հրապարակումների և նոր տեխնոլոգիաների վերաբերյալ: Մշակել և ներդնել ՀՀ գիտնականների աշխատությունների ցիտման ցուցչի գնահատման արդյունավետ մեխանիզմներ:
- Ներդնել «Ֆրասկատտիի ուղեցույցի» հիմնական չափորոշիչները:
- Խրախուսել բարձր ցիտման ցուցիչներ ունեցող գիտնականներին:
- Պարբերաբար կազմակերպել հայ գյուտարարների գյուտերի և օգտակար մոդելների թեմատիկ ցուցահանդեսներ:

### ***4. Ինովացիոն արտադրանք տվող ենթակառուցվածքներ***

- Ակտիվացնել համագործակցությունը բիզնես-ինկուբատորների, տեխնոպարկերի, ինժինիրինգային, կոնսալտինգային, վենչուրային ֆիրմաների, տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնների հետ:



- Ապահովագրել և զարգացնել վենչուրային ֆինանսավորման համակարգը, ակտիվացնել միջազգային տեխնիկական համագործակցությունը:
- Կիրառել ինովացիոն նախագծերի մշակման և իրականացման, տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ներմուծման և ներդրման գործընթացներում օտարերկրյա պետությունների հայ ձեռներեցների փորձը:
- Ներգրավել գործարար ծրագրերի փորձաքննության անկախ փորձագիտական համակարգում օտարերկրյա ճանաչված հայ գործարարներին:
- Կազմակերպել վենչուրային տոնավաճառներ:
- Կիրառել հարկային վարկավորման մեխանիզմներ:
- Ներդնել աութօրսինգային ծառայությունների մշակույթ:
- Ակտիվորեն ինտեգրվել ներդրումային ողովաձուրյան ինտերնետ-ցանցերին և հարթակներին /alibaba.com, kickstarter.com և այլն/, կազմակերպել թրենինգներ, վարպետաց դասեր:

##### **5. *Ընդհանուր համակարգային խնդիրներ***

- Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության զարգացման միտումները, իրականացնել ԱԻՀ-ի ենթակառուցվածքների վերաբաշխում՝ ծանրության կենտրոնը տեղափոխելով դեպի փոքր և միջին ձեռներեցություն:
- Ձևավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ՝ խթանելով մասնավոր բիզնեսի ներգրավմանը դեպի գիտություն և ապահովել այդ գիտելիքների նպատակուղղված ներդրումը կրթության և տնտեսության այս կամ այն ոլորտ:
- Իրականացնել հայաստանյան և համաշխարհային տնտեսության նորարարական զարգացման երկարաժամկետ կանխատեսում այն ոլորտների բացահայտման նպատակով, որտեղ խաչվում են Հայաստանում կուտակված գիտահետազոտական ներուժը և համաշխարհային շուկայի միտումները:
- Համապատասխանեցնել օրենսդրությունը՝ մտավոր սեփականության իրավունքների հանդեպ հաստատելու շահերի ներդաշնակություն և հավասարակշռություն պետության, ԳՀԻ-ների և մշակողների միջև:
- Աջակցել փոքր ինովացիոն ձեռնարկությունների գիտատար արտադրանքի և բարձր տեխնոլոգիաների արտահանմանը միջազգային շուկա՝ ի հաշիվ արտասահմանյան ներդրումների մեծացման, արտաքին առևտրի կանոնների կատարելագործման և արտահանման-ներմուծման գործարքների առանձնահատկությունների յուրացման:

- Ապահովել ինովացիոն ձեռնարկատիրության սուբյեկտներին իրավական, տնտեսագիտական, վիճակագրական, արտադրատեխնոլոգիական, շուկայագիտական տեղեկատվությամբ՝ հատուկ ստեղծված տեղեկատվական-վերլուծական կենտրոնների, մասնագիտացված տվյալների բազաների և բանկերի, տեղեկատվական համակարգերի և հաղորդակցական ցանցերի, ժամանակակից համացանց-տեխնոլոգիաների միջոցով:
- Ավելացնել վենչուրային ներդրումների ծավալը ի հաշիվ երկարաժամկետ կապիտալի շուկայի, ներգրավել ինովացիոն նախագծերում ապահովագրական ընկերությունների և կենսաթոշակային ֆոնդերի միջոցները:
- Փոքր ինովացիոն ձեռնարկատիրությունը ֆինանսավորելիս, կիրառել պետության մասնակցությամբ բանկային ապահովագրման մեխանիզմ, անորոշության և ռիսկի նվազեցման նկատառումով, որը կկատարի ապահովագրական գործակալության դեր՝ բանկերին առաջարկելով վերաապահովագրման ծառայություններ:

### **Եզրակացություն**

Ներկայացված խնդիրների լուծումը կարող է առաջացնել դոմինոյի էֆեկտ: Աջակցություն կցուցաբերվի տեխնոլոգիաների առևտրայնացմանը, գիտության և տնտեսության ինտեգրմանը, պետության և գործարարության միջև գործընկերության խորացմանը, արտադրանքի, ծառայությունների անվտանգության ու որակի ապահովման բնագավառում պետության շահերի և սպառողների իրավունքների պետական պաշտպանությանը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրավիճակի ընդհանուր նկարագիրը.....	3
Միջազգային փորձը.....	4
Առկա խնդիրները.....	7
Առաջարկվող լուծումները.....	12
Եզրակացություն.....	17

---

Ծավալը՝ 1,1: Ֆորմատ 60x84 1/8

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/3, ՆՁԱԿ ՊՈԱԿ